ժողովուրդը, իր տանը հաց չունէր ուտելու, նրա որդիքը նօթի եւ կիսամերկ էին, նա իր աղքատ դրութեան մէջ դարձեալ հագցնում էր եւ կերակրում էր իր հոգեւոր հայրերին, որպէս իր վանքերի պաշտօնեաներին, որպէս աստուծոյ տան սպասաւորներին, որոնց աղօթքովն էր ապրում ինքը, որոնք հաշտեցուցիչ կապ էին իր եւ երկնքի մէջ... Ժողովուրդն իր հունձքից մասն էր հանում աբեղաների համար, իր անասունների իւղից եւ պանրից նրանց բաժին էր տալիս, ինքը եւ իր արօրը ձրի աշխատում էին վանքապատկան կալոածքների մէջ, մի խօսքով, նա վճարում էր իր աբեղաներին աւելի, քան թէ իր կարողութիւնը ներում էր:

Ահա ինչ էր, որ կապում էր հային իր հայրենիքի հետ:

Բայց Կարօն ասում էր, թէ վարդապետները նոյնպիսի հարստահարողներ են, որպէս քուրդ եւ թուրք աղաները: Ես բարկանում էի...

ԻԸ. ՆՇՈՅԼՆԵՐԸ ԵՐԵՒՈՒՄ ԵՆ

Թէեւ ծերունի որսորդը միշտ ցաւակցական արհամարհանքով էր խօսում հայերի մասին, ասելով՝ թէ նրանք հոգով եւ մարմնով բոլորովին ընկած եւ սպանուած ժողովուրդ են, բայց ես նրա նկատողութիւնը իրաւացի էի գտնում միայն Պարսկաստանի հայերի վերաբերութեամբ, այսինքն նրանց, որ բնակւում էին Ատրպատական նահանգում: Ընդհակառակն, Տաճկաստանի հայերը — Տարօնի եւ Վասպուրականի մէջ — համեմատելով իրանց ատրպատկանցի համազգայինների հետ, բաւականին աշխոյժ եւ կենդանի մարդիկ էին:

Դա ունէր իր տեղական եւ կլիմայական պատճառները:

Ատրպատականի գաւառները, բացի լեռնային եւ անտառապատ Ղարադաղից, մնացածները տափակ երկիրներ էին եւ աւելի տաք կլիմայով: Երկրագործութիւնը, որ միակ աղբիւրն էր ժողովրդի ապրուստի, խիստ պինդ կերպով կապել էր բնակիչներին հողի հետ, եւ հետեւաբար շատ նեղ կերպով սեղմել էր նրանց հողատիրոջ — աղաների ճանկերի մէջ:

Աղաների ճնշումն էր յաջորդաբար եւ տեւողական: Մի այսպիսի կեցութեան մէջ մարդը կորցնում էր իր ազատութիւնը եւ նրա հետ իր մտաւոր եւ հոգեկան կենդանութիւնը: Նա դառնում է կրաւորական էակ: Արձակ դաշտը, տափակ երկիրը շինում է նրան աւելի ընտանեկան, աւելի խաղաղասէր, միեւնոյն ժամանակ երկչոտ: Մինչդեռ լեռը, անտառը պահպանում են մարդու մէջ նրա սկզբնական վայրենութիւնը եւ հետեւապէս նրա սրտի ամրութիւնը եւ քաջութիւնը: